



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10633

658

7-39







51.  
p. 1038



150

2002



Մ. Գ. Բ. Կ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Կ. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ.

ՄԻՄՈՆ ԶԻՄԼԻՔՁԵԱՆ


ԱՌԱՋՆՈՐԴ  
ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Կ Ա Մ


ՏԱՐԵՐՔ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Պատմութիւն վաճառականութեան եւ ուսումնասիրութիւնք վաճառականութեան ամէն ճիւղերու վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տաճկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր զիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական սակարանական եւ պանքայի հաշիւներ եւայլն.



Հաստ Ա. — Տեսք Ժ.




Կ. ՊՈՒԻՍ

ՏՊԱԳՐ.ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901



## Թիֆթիֆի Վանառականութիւնը



Կ. Պոլսոյ Անգլիական Առեւտրական Սենեկի նախագահ Մր. Ուիթօլ, որ Թիֆթիֆի վաճառականութեամբ կը զբաղի, հետեւեալ ծանօթութիւնները տուած է առուտորի այս կարեւոր ճիւղին վրայ :

1888էն մինչեւ 1897 տասնամեայ շրջանին մէջ Թուրքիայէ ներածուած են 413,600 հակ Թիֆթիֆ (1 հակ = 75 քիլո) : 3500 հակէն զատ, որք Ռուսիա զրկուած են — զլիսաւորապէս Վաքաւա — միւսները գացած են Անգլիա, որ խամ Թիֆթիֆի մեյ աշնորհն ունի : 1898ին, Թիֆթիֆի վրայ եղած գործերը միջինէն վեր էին, վասն զի նոյն տարւոյ Մայիս 1էն մինչեւ 1899 Ապրիլ 30, 60,000 հակ Թիֆթիֆ զրկուեցաւ Անգլիա : Ամէնէն աւելի Պրատֆորդն է, ճարտարարուեստական մեծ կեդրոն մը, ուր կ'երթան այս Թիֆթիֆներ՝ մանուելու համար : Երբ մանուին, Ֆըրանսա, Գերմանիա, Հոլանտա եւ ուրիշներ կը գնեն Անգլիայէ, հիւսուածոններ շինելու համար : Զարմանալի է որ այս բոլոր ճարտարագործ երկիրներ Թիֆթիֆն Անգլիայէ կը զընեն և չեն աշխատիր նախնական նիւթն ուղղակի արտադրութեան տեղէն բերել տալու : Հոս, Պոլսոյ մէջ, Թիֆթիֆներն իրենց տեսակին համեմատ կը դասակարգուին ճարտար գործաւորներու ձեռքով, Դասակարգութեան այս փափուկ գործը զատ արհեստ մը կը կազմէ :

\* \* Թիֆթիֆն ընտիր եւ երկար կ'ըլլայ եթէ այժը բարձր տեղեր գտնուած մարգագետիններու մէջ ճարակի : Ամէնէն ընտիր տեսակները կը հայթայթուին այն այժերէն որք ծովին մակերեսէն 5000 ոտք բարձր տեղեր կը ճարակին : Լաւագոյն տեսակ Թիֆթիֆները հետեւեալ տեղերէն կուզան . —



Ա. Տեսակ  
Պէյրազար  
Էսկիշէհիր  
Գարահիսար  
Նալլըխան

Բ. Տեսակ  
Էնկիւրի  
Չանղըրը  
Չէրքէս  
Գասթամաղու ևն:

Ժամանակէ մը ի վեր Բարեյոյսի մէջ այժ կը մեծցնեն , առաջին այժերը Թուրքիայէ գնած ըլլալով : Բարեյոյսի արտադրած Թիֆթիքը գրէթէ կրկինն է Թուրքիոյ արտադրութեան , բայց տեսակը լաւ չէ : Թուրքիոյ երկրորդ կարգի ապրանքներուն կը համեմատուի : Կ . Պոլսէ արտածուած առաջին տեսակ Թիֆթիքներն իրենց նմանը չունին ո՛չ մէկ տեղ և մրցումէ ալ չեն վախնար :

\* \* \* Թիֆթիքը շահագիտութեան ենթակայ ապրանք մ'է : Գիները միշտ եւ արագ արագ կը փոխուին : Ատեն եղած է որ Թիֆթիքին գինն հիմակուան գիներուն կրկինն եղած է և Էնկիւրի , որ այս ապրանքին արտադրութեան գլխաւոր կեդրոնն է , անոր շնորհիւ շատ բարգաւաճ վիճակ մը ունեցած է : Ուրիշ շրջանի մը մէջ ալ , Թիֆթիքին գիները ինկան , եթէ չենք սխալիր , մինչեւ 12 զրուշի : Այն ատեն սկսան այժերը մորթել , զանոնք պահելն ու մեծցնելը շահաբեր չըլլալուն համար : Թիֆթիք տուող այժը փոքր է եւ շատ սիրուն՝ իր մետաքսաւէտ ու արծաթափայլ գեղմովը : Կայսերական կառավարութիւնն ամէն ջանք կ'ընէ այժարուծութիւնը քաջալերելու և յառաջացնելու , որպէս զի երկրին հարստութիւնն ալ նոյն համեմատութեամբ աճի :

\* \* \* Այժի մորթերն արտասահման կը շրջուին , և հոն մահճակալի տուրք փոստերէ սիրուն և չքեղ գորգիկներու կը վերածուին :

## ՍՆԱՆԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գ .

Դատարանը՝ սնանկութեան վճիռը տալէ ետք՝ կը նշանակէ մէկ կամ մի քանի սինիֆներ , պարտականին գոյքերը տրնտեսելու և հաշուեյարգարութիւնը կատարելու համար , ինչպէս նաեւ ժիւժ foudhuker մը հակակշիռ ի գործ դնելու համար : Սնանկութեան վճիռն ըստ օրինի կը հրատարակուի խոյն : Եւ արդարեւ պարտականի մը օրինապէս իր գոյքերուն տրամադրութենէն զրկուիլն հարկ է ծանուցուի ամէնուն ամենակարճ միջոցի մէջ . վճիռը կը կախուի դատարանին սրահը և կը հրատարակուի դատարանին գտնուած տեղւոյն լրագրաց մէջ , ինչպէս նաեւ այն տեղերու լրագրաց մէջ , ուր սնանկն առեւտրական ուրիշ տուներ կամ մասնաճիւղեր ունի : Դատական հաշուեյարգարութեան համար ալ այսպէս է : 1889ի Ֆրանսական օրէնքը կը պահանջէ նաեւ որ վճիռն հրապարակաւ արտասանուի : Սնանկութեան վճիռն անդառնալի չէ : Եթէ բողոք ունեցողը սնանկն է , ութ օրուան մէջ , և եթէ պահանջատէր մը՝ մէկ ամսուան մէջ պէտք է մատուցանէ իր բողոքը : Վերաքննութիւնն ընդունելի է մինչեւ 15 օր , հոգ չէ թէ սնանկութիւնն երկու կողմերու ներկայութեան վճռուած ըլլայ կամ ի բացակայութեան : Վերաքննիչ Ատեանը կը տեսնէ դատն և ըստ պարագային կը հաստատէ կամ կը բարեփոխէ վճիռը : Վիճարանութեան նիւթ եղած է սա խնդիրը թէ Ատեանը կրնա՞յ և պարտի՞ ջնջել սնանկութեան վճիռը երբ պարտականն առաջին վճռին տրուած ատեն իրօք վճարումները դադարեցուցած , բայց այդ թուականէն ետքը վճարած ըլլայ իր պարտքը կամ կարգադրութիւն մը կնքած ըլլայ իր բոլոր պահանջատէրերուն հետ :



Գատական հաշուեյարդարութեան վճիռը, ընդհակառակը, ո՛չ վերաքննութիւն կ'ընդունի, ոչ վճռարեկութիւն։ Անցողակի ըսենք թէ Առեւտրական դատարանի պաշտօնը չաւարտիր սնանկութիւն կամ հաշուեյարդարութիւն վճռելով։ Օրէնքն այդ դատարանին վրայ պարտ կը դնէ սնանկութեան խնդրոյ մը մէջ ծագելիք բոլոր գործերը կարգադրել։

Գ.

Սնանկութեան վճռի մը հետեւանքները բազմաթիւ են։ Մէթոտաւոր դասակարգութիւն մը պէտք է ընել, որպէս զի լաւ հասկցուի սնանկութեան մը ազդեցութիւնը դանազան շահակիցներու իրաւանց վրայ։ Ուրեմն զատ զատ քննենք այս կարգի հաշուեյարդարութեան մը մէջ շահ ունեցողներու հանգամանքը։ Այդ շահակիցներն են պարտականք, պահանջատերեր, որք մասան կը կազմեն, համապարտ պահանջատերեր, առանձնացնորհեալ պահանջատերեր։ Պարտականք. — Սնանկութեան վճռին ուժով և այդ վճռին հրատարակումէն առաջ սնանկին ինչքը կը գրաւուի։ Ասով ըսել կ'ուզուի թէ սնանկը կորուսած է իր գոյքն ու դածին պէս գործածելու իրաւունքը։ Այնուհետեւ իր կատարած վաճառումներ, յանձնառութիւններ, խոստումներ նշանակութիւն չունին պահանջատէրերու մասային համար։ Մասան իբր կանոնաւոր պարտք կը ճանչնայ միայն անոնք զոր սինսիբը կը կնքէ իր իրաւասութեան սահմանին մէջ։ Այս կարգի պարտքերը «Մասային պարտքերը» կը կոչուին։ Սինսիբը կամ ինք կը կնքէ զանոնք կամ իր կողմէ գործին գլուխը զրուած անձը։ Սինսիբը ընդհանրապէս սնանկին կը յանձնէ իր գործը շարունակելու պաշտօնը, փութ-փոխերին արտօնութեամբ։ Սնանկը, այս պարագային, մասային գործակալը կ'ըլլայ պարզապէս։ Գրաւումը կը կատարուի պարտականին բոլոր ինչքերուն վրայ, նոյն իսկ անոնց ալ վրայ, զոր պարտականը կ'ստանայ սնանկութենէն ետք, ինչպէս ժառանգութիւն, պարգեւ ևն, պայմանաւ սակայն որ մասան վը-

ճարէ այդ ժառանգութեան ևն. յարակից պարտքերը, յաւելեալ մասը միայն վար դնելով։ Այս մասին գերման իրաւաբանութեան տրամադրութիւնը տարբեր է։ Գրաւումը կը կատարուի ա՛յն ինչքերուն վրայ միայն որք պարտականին սեփականութիւնն են իր սնանկութեան պահուն։ Յաճախ կը պատահի որ պարտականը, իր սնանկութեան գործը լինցնելէ առաջ և առանց սինսիբին խորհուրդ հարցնելու, կը ձեռնարկէ գործի մը, որ ո՛ր եւ է յարաբերութիւն չունի վտանգուած գործին հետ։ Այս նոր շահագործութիւն սնանկութեան սահմանէն դուրս չի կրնար մնալ։ Մասան կրնայ պահանջել որ այդ ինչքերն ալ միացուին հիներուն։ Բայց հոս ալ նախապէս պէտք է վճարէ այդ գործէն ծագում առած պարտքերը, թէեւ անոնք առաջ կուգան այնպիսի գործառնութիւններէ, զոր սնանկն ինք ըրած է եւ որուն հաւանած չէ սինսիբը։ Սնանկութեան յայտարարութենէն ետք պարտականին կնքած պայմանագրութիւնները ապօրէն ըլլալով, իրաւունք չեն տար անոնց տէրերուն դատ բանալ, մասային ձեռք գտնուած գոյքին մէկ մասը գրաւելու համար։ Բաց աստի, սնանկը չի կրնար դատի ելնել ո՛չ իբր պահանջող ո՛չ իբր պահանջընդդէմ։ Դատերը պէտք է տեղի ունենան սինսիբին կողմէ կամ սինսիբին դէմ, ապա թէ ոչ տրուելիք վճիռն արժէք մը չունենար մասային համար։ Բայց գրաւումը սահման մ'ունի։ Պարտականին անձին յատուկ իրաւունքներուն չի կրնար դպչիլ։ Ասոնց մէջ՝ իբր գլխաւոր յիշենք այն իրաւունքը, զոր պարտականն ունի իբր հայր, իբր ամուսին, կամ ուրիշ բառով, սնանկին ձեռքէն չի կըրնար առնուիլ իր կնոջ ու գաւակներուն ընչից վարչութիւնը։ Ամուսնական դրութիւնը (régime), որուն ներքեւ կը գրտնուէր իբր ամուսին, երբեք չի դադրիր սնանկութեան պատճառաւ։ Կինը, իրաւ, կրնայ ընչից բաժանում պահանջել թէ՛ ամուսնին թէ՛ սինսիբին դէմ միանգամայն դատ բանալով, բայց եթէ չպահանջէ, պահանջատեարք չեն կըրնար առնել դրամօժիտը կազմող ինչքերուն եկամուտները։

1. — Ըսինք թէ սնանկութեան տեւողութեան միջոցին սինսիբը կը վարէ պարտականին գործերը։ Բացատրենք



Թէ ի՛նչ է սինսիք: Սինսիք մասային ներկայացուցիչն է: Սովորաբար մէկ հոգի կը վարէ այդ պաշտօնը: Բայց օրէնքը կ'արտօնէ ընտրել մինչեւ երեք սինսիք, որք հաւաքաբար կը գործեն: Սնանկութեան վճռին մէջ դատարանին անուանած սինսիք կը կոչուի « առժամեայ սինսիք »: Վճռէն 15 օր ետք, պահանջատէրք կը հրահրուին իր պաշտօնին մէջ հաստատել սինսիք կամ անոր տեղ ուրիշ մը ընտրել: Այդ պայմանաժամէն ետք, դատարանը, առանց պահանջատէրերուն խորհուրդ հարցնելու, կ'անուանէ « վերջնական սինսիք », որ գրէթէ միշտ առժամեայ սինսիք կ'ըլլայ: 1807ի Ֆրանսական Օրինագրքին համաձայն, սինսիքի պաշտօնը պէտք էր յանձնուէր պահանջատէրերէն մէկուն, որ վարձք մը չէր առներ: Բայց այս օրէնքը փոխուեցաւ 1838էն ի վեր: Սինսիքսիքները, առեւտրական կարեւոր կեդրոններու մէջ, մասնաւոր պաշտօն մ'է որու վարձքը կ'որոշէ փւժ. ֆուժ. սերը: Պարտականն ու պահանջատէրք 8 օրուան մէջ կրնան բողոքել այդ վարձքին քանակութեան դէմ: Բարիզի եւ ուրիշ քաղաքներու մէջ սինսիքները մասնաւոր ընկերակցութիւններ կազմած են, առեւտրական դատարանին հակակռիւն տակ: Այդ ընկերակցութիւնք դրամագլուխ մը ունին որ կը գոյանայ մէն մի սինսիքի տրուած վարձքին մէկ քառորդէն: Անցողակի յիշենք թէ Բարիզի մէջ օրէնք է սնանկութեան գումարին վրայ 5 % տալ սինսիքին: Երբ սինսիք մը պաշտօնէն քաշուի, տուած երաշխաւորութեան գումարն և իր բաժինը կ'առնէ: Եթէ Առեւտրական դատարանն այդ սինսիքին տեղ ուրիշ մը կարգէ, այս վերջինը պարտաւոր է առաջնոյն առածին հաւասար գումար մը տալ: Շատ տեղեր, ուր սինսիքներու կազմակերպեալ մարմիններ չկան, սնանկութեանց կարգադրութիւնը նօտարներու կը յանձնուի:



# ԾՈՎԱՅԻՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## Թ Ո Ւ Ր Ք Ի Ո Յ

### Ս Ա Մ Ո Ս

Սամոս կղզիին մակերեսը 600 քառակուսի քիլոմէթր է: Բնակիչ 50-55 հազար հոգի: Կղզին ունի շատ դպրոցներ որոնց շնորհիւ բնակիչներուն իմացական մակարդակը բարձր է: Սամոս շատ լեռնոտ է, բայց արգաւանդ հող մ'ունի: Գլխաւոր մշակութիւններն են որթատունկ եւ ձիթենի: Ի՞արժ եւ չոր պտուղներ ալ կ'արտադրէ, ինչպէս նարինջ, թուզ, ընկոյզ, նուշ, եղջիւր (էէչի պոլյնուզու): Կ'արտադրէ նաեւ սոխ, բամբակ եւն: Որթատունկերն 30,000 հեքթար մակերեսը մը բռնած են: 600,000 ձիթենի եւ աւելի քան 30,000 եղջիւրենի կան: Կղզին իր սպառման բաւելու չափ արմտիք չարտադրեր: Արտածումներն են գինի, որ նշանաւոր է. ձէթ, թարմ եւ չոր պտուղ, ալքօլ եւ օճառ: Երկիրը որսաշատ է: Վայրի սիրամարգ (թաուս գուտու) շատ կայ:

Սամոս չորս նաւահանգիստ ունի. —

1. — Վաղի, որ բնական նաւահանգիստ մ'է եւ ձիւ պայտի ձեւ ունի: 100 մէդր երկայն թոււք մը կը պաշտպանէ անոր մուտքն հիւսիսի հովերուն դէմ: Վաղի Արքեպիղագոսի ամէնէն լայն նաւահանգիստն է: Մուտքը 3 մըղոնէ աւելի լայնութիւն ունի: 1899ին հոն այցելած են համազումար 614 նաւ եւ 1188 առաքաստանաւ: Ասոնց մէջ առաջին տեղը կը բռնեն Օոմանեան շոգենաւերը (231) եւ առաքաստանաւերը (343): Մէսածըրի շոգենաւերը կը հանդիպին հոն:



2. — Գիկանի, արուեստական նաւահանգիստ հարաւային կողմը: Աս էր հին Սամոս քաղաքի նաւահանգիստը որու համար Հերոդոտ կ'ըսէ թէ իր ժամանակին ամէնէն նշանաւոր նաւահանգիստներէն մին էր: 1899ին հոն այցելած են 279 շոգենաւ եւ 1162 առագաստանաւ (166 շոգենաւ եւ 246 առագաստանաւ Օսմանեան):

3. — Քարլովասի, 7-8 տարիէ ի վեր շինուած նաւահանգիստ մը: Գլխաւոր թումը մինչեւ 300 մէթր կը յառաջանայ ծովուն մէջ եւ նաւահանգիստը կը պաշտպանէ հիւսիսային հովերուն դէմ: որք շատ բուռն են: 1899ին Քարլովասիի նաւահանգիստն այցելած են 450 շոգենաւ (249 Օսմանեան) եւ 733 առագաստանաւ (186 Օսմանեան):

4. — Մարադոֆամպօ, որու առեւտրական շարժումն աննշան է: 1899ին այցելած են 6 շոգենաւ (3 Օսմանեան) եւ 489 առագաստանաւ (93 Օսմանեան):

Սամոսի առեւտրական դրօշին վրայ երեք հորիզոնական երկղներ կան, կապոյտ, ճերմակ, կարմիր, որոնց մէջտեղէն կ'անցնի ուղղահայեաց ճերմակ երկղ մը: Լեռնաշղթայ մը Սամոսի արեւմուտքէն կ'երկարի մինչեւ հարաւ: Լեռներուն մէջ շատ քարանձաւներ կան: Անոնցմէ մին, որ Քանտիլի կը կոչուի եւ ծովէն 500 մէդր բարձր է, բոլորովին անմտաշելի է եւ հետաքրքրական երեւոյթ մը կը պարզէ: Փոթորկալից գիշերները լոյս մը կը սլալայ այս քարանձաւէն: Փոսփորական արտաշնչութիւններ են որք օդին հետ շփուելուն պէս կը բոցավառին:

Սամոսի մէջ կը պատրաստեն կաշի, օճառ, կերպաս եւ մետաքսէ ժապաւէններ: Եզորոս հոն գերի եղաւ Քասնդոսի: Երբ լուսինը ծագէր, Հոմերոս, պզտիկ տղաքներու հետ, հարուստ Սամոսցիներուն դուռը կը զարնէր եւ նուէր կը խնդրէր երգելով « Ռաֆօ » ն, զոր ապա երկար ատեն շարունակեցին երգել Սամոսցի տղայք: Վերջապէս Սամոսի մէջ էր որ Հոմերոս « Վառարան » ի երգը շինեց, հաճելի ըլլալու համար բրուտներու, որք ճաշի հրաւիրած էին զինք:

Ա.Ղ. — [Յրաններէն sel, անդլիերէն salt, գերմաներէն salz, իտալերէն sale]. — Աղը հանքերէ կամ ծովի ջուրերէն կը հանուի եւ սնունդներու համար իբր համեմ կը գործածուի: Երկրագունտին վրայ անսահման քանակութեամբ աղ կայ: Անով կը պատրաստուին furoցոնաք sp unis, որ օճառաշինութեան կը ծառայէ, սիւլֆադ sp unis, որ իբր մաքրողական կը գործածուի, ոսկերորակ կամ պօռադ sp unis, իբր ամոքիչ, եւ վերջապէս ցիդրադ sp unis, որ վերջին ժամանակներս գործածուեցաւ մշակուած հողերուն ազօղի կորուստը լեցնելու համար: Ամէնէն աւելի ծովու աղն է որ կը ծառայէ արհեստական աղերու պատրաստութեան, Լըպլանի կամ Սօլվէլի մէթոտներով furoցոնադ sp unisի վերածուելէ ետք: Ծովին ջուրը շատ տարրեր կը պարունակէ: Քլօրիւր sp uosիօմը, որ առաւելակշիռ չափով կը գտնուի, աղի համ կուտայ և սիւլֆադ sp մանեգին իր լեղիութիւնը կը փոխանցէ անոր: Երկրագունտի զանազան ծովերը այնպիսի բաղադրութիւն մը ունին որ օդին բարեխառնութեան, տիրող հովերուն եւ անցնող հոսանքներուն համեմատ կը փոխուի: Պաղ երկիրներու ծովերը նուազ հարուստ են աղի կողմէ, քան հասարակածային ծովերը, ինչպէս կը վկայէ հետեւեալ ցուցակը, որ ցոյց կուտայ աղին կրամը, առ մէն մի լիտր ջուր. —

Ատլանտական	32—38	Սեւ ծով	17
Սաղաղական	32—34	Պալգիկ »	5—18
Միջերկրական	29—40	Ազախի »	12
		Կասպից ծով	6

Ծովի ջուրերուն պարունակած աղերուն մեծ մասը եւ մասնաւորապէս քլօրիւր sp uosիօմը կրնան հանուիլ գոլորշիացումով: Ահա՛ այս գործողութեան սկզբունքը. — Ծովին ջուրը կը տարուի աւազանի մը մէջ, որ կարգ մը երկրորդական ընդունարաններ ունի եւ որոց մէջ կը կատարուի գոլորշիացումը: Այս ընդունարաններուն մակերեւոյթը մեծ եւ խորութիւնը քիչ է: Յատակը կարելի եղածին չափ հարթ եւ հողը կարծր պէտք է ըլլայ, որպէս զի ցելս չկազմուի: Աղ հանելու գործողութիւնը այնքան դիւրին ու պարզ չէ



որքան կը կարծուի նախապէս, վասն զի ԲՅՈՒՐ ՏՐ ԱՍԻՈՒԻ հետ ուրիշ բաղադրութիւններ ալ կը խառնուին: Գոյորչիացումէն ետք, աղը կը հանուի մասնաւոր թիւերով: Տաք կամ բարեխառն երկիրներու մէջ արեւին տաքութենէն կամ ծովեզերաց վրայ տիրող հովերէն օգուտ կը քաղեն աղ հանելու համար: Այսպէս է Ֆրանսայի արեւմտեան մասին, Բորդուկալի եւ հարաւային Ռուսիոյ աղի աւազաններուն համար: Հիւսիսային Ռուսիոյ եւ Սիպերիոյ մէջ ալ տարւոյն մեծ մասը տիրող ցուրտերէն օգուտ կը քաղեն մասամբ սառեցնելու համար աղային ճահիճները: Սառած մասը գրէթէ զուտ ջուրէ կազմուած է որ կը հանուի և մնացեալ հեղուկը աղով յագեցած կ'ըլլայ: Այդ հեղուկը, արհեստական տաքութեամբ գոյորչիանալուն պէս, աղի կը վերածուի:

Աղը, ինչպէս ըսինք, կը հանուի նաեւ աղային երակներէ եւ կը կոչուի աղունակ (խայս բուզու): Հողին մէջ աղին ներկայութիւնը սապէս կրնայ բացատրուիլ: Ջուրին մէջ գոյութիւն ունեցող աղը չորնալով երկրաբանական խաւեր կազմած է: Այսպէս, Գերմանիոյ մէջ, Աբասֆուրդի կարեւոր հանքերէն հանուած աղը ծովէն հանուած աղերուն կը նմանի ամէն տեսակէտով: Եւրոպայի մէջ շահագործուած գլխաւոր աղահանքերն են Վիլիքէքա՝ Լեհաստանի մէջ, Հալ՝ Գիբրոլի մէջ, Սալզպուրկ եւ Իշլ՝ Աւստրիոյ մէջ, Մբասսֆուրդ՝ Մակաէպուրկի մօտ, Վիք եւ Տիէօզ՝ Ալլաս-Լօռէնի մէջ եւ Պէքս՝ Ջուրիցերիոյ մէջ, եւն: Կարեւոր աղահանքեր կան նաեւ Ժիւրայի, Հօդ Սօնի, Առիէժի, Ստորին Պիրենեանց եւ վերջապէս Ալժէրիոյ մէջ: Աղ հանելու համար երկու մէթոտ կայ հանքին երեսկունկ կամ խոր ըլլալուն համեմատ: Առաջին պարագային մէջ, հանքը կը շահագործեն սովորական մէթոտներով: Այս աղը երբեմն այնքան մաքուր կ'ըլլայ որ ուղղակի սպառումի կը յանձնուի: Բայց յաճախ կա եւ կիրի ծծմբատ կը գտնուին մէջը եւ անխորժ համ մը կուտան անոր: Կը գտնուին նաեւ կալրային նիւթեր եւ կազեր: Այն ատեն այդ աղն արջառներուն կուտան իբր սնունդ: Եթէ աղահանքն ընդհակառակը շատ խոր է, ընդհատ կամ շարունակական հալեցումի մէթոտը կը գործածեն

անուշ ջուր լեցնելով հանքերուն մէջ և այդ ջուրն յագեցնալուն պէս դուրս հանելով: Այս գործողութիւն քանի մը շաբաթէն մինչեւ 8-10 ամիս կը տեւէ: Աղը, ուտելիքներու համն ու հոտը ամբողջացնելու յատկութիւնովը, անհրաժեշտ տարր մը եղած է ամէն երկիրներու մէջ: Ափրիկէի կարգ մը ժողովուրդներ ո՛չ միայն իբր դրամ, այլ փոխանակութեան իբր հիմ, իբր միջոց կը գործածեն աղը: Միջին դարուն մէջ, աղին մաքուր շատ ծանր էր եւ ամէնէն անժողովրդական տուրքն էր որ գոյութիւն ունեցած ըլլալ երբեք: Այսօր ալ տուրք կայ, բայց ո՛չ այնքան ծանր:

Միջազգային վաճառականութիւն. — Ֆրանսա տարին միջին հաշուով կը ներածէ 300 հազար մեդրական կենդինար աղ եւ կ'արտածէ 1 միլիոն մ. կենդինար: Սպառած աղին 100 քիլոյէն 10 ֆր. տուրք կ'առնուի: Բացառութիւն են. 1. — Օտար երկիր կամ ֆրանսական գաղթավայրերը զրկուած աղերը: 2. — Արհեստական գործածութիւններու յատկացած աղերը, պայմանաւ որ բնութիւնին փոխուի Մաքսային Վարչութեան տրամադրած միջոցներով եւ 3. — Արջառներու սնունդի եւ պարարտացուցիչ նիւթերու յատկացեալ աղերը: 10 ֆր. սպառման տուրքէն դատ, 100 քիլոյէն 2, 40 ֆր. մաքսատուրք կ'առնուի: Անգլիոյ մէջ արտադրուած աղին քանակութիւնը միջին հաշուով 2 միլիոն թօնօ է: Անգլիա աղ չի ներածեր, այլ մեծաքանակ կը ծախէ Մ. Նահանգներուն, Գանատայի, Դանիոյ, Պելժիոյ, Գերմանիոյ, եւն: Կարմիր ծովէն շատ աղ կ'ելլէ, վար տեսակ, եւ կը զրկուի Հնդկաստան, ուր անգլիական աղի հետ խառնուելով, խիստ ատան կը ծախուի: 1900ին, Լիվրբուլի մէջ, զանազան տեսակ աղերու միջին գիներն էին հետեւեալները. —

Սովորական	աղ	5 շիլին	6 րէնս
Մանրուած	»	6 »	6 »
Մաղուած	»	7	
Կարագի յատուկ	»	15	
Կալկադա ըսուած տեսակը		12 »	6 »
Ջուրի համար ընտիր	»	17 »	6 »



Այս գիներուն վրայ 15-25 0/0 զեղչ մը կ'ըլլայ տեսակին եւ զրկուած տեղւոյն համեմատ : Պրեկալալի (Գերմանիա) աղահանքերը նշանաւոր են արտադրութեան կողմէ : Լօռէնի աղահանքերը տարին 7-800,000 մեդրական կենդինար աղ կ'արտադրեն : Լօռէնի աղը, Ալլաա-Լօռէնէ դուրս, գլխաւորապէս կը ծախուի Բրուսիոյ եւ Լիւքսէմպուրկի մէջ : Պուլկարիա տարին միջին հաշուով 1 ու կէս միլիոն Ֆր. ի աղ կը ներածէ : Սպանիա՝ 260,000 թօնօ : Նորվեկիա՝ 2 միլիոն 30 հազար քուրոնի (1 քուրոն = 1,33 Ֆր.) : Շուէս՝ 2 միլիոն քուրոնի : Եւրոպական եւ Ասիական Ռուսիոյ մէջ աղի համագումար արտադրութիւնն է 93 միլիոն բուտ : Արտասահմանէ ալ կը ներածուի 500,000 բուտ : Օտար աղի ներածումը հետզհետէ պակսելու վրայ է : Միայն Ռիկայի նաւահանգիստը տարին 1,800,000 բուտ Նրիմի ճերմակ աղ կ'ընդունի : Օրէնպուրկի, Եքադէրինոսլաւի, Երեւանի եւ Կարսի մէջ աղի կարեւոր խաւեր գտնուած են : Կը կարծուի թէ այս նահանգներէն հանուած աղուճակը երկար տարիներ կը բաւէ ամբողջ աշխարհի : Թուրքիոյ մէջ, 1900ին, թէ՛ ներքին սպառման եւ թէ՛ արտածութեան համար ծախուած է 234,674,835 քիլօ աղ, որուն

27	միլիոնը	գացած է	Հնդկաստան
4	»	»	Պուլկարիոյ նահ. գիտները
2 1/2	»	»	Ռուսիանիոյ »
2	»	»	Սերպիա
1900 Գեկտեմբերին 381,564,470 քիլօ պատրաստ աղ կար Թուրքիոյ մէջ :			

**ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ.** — Մովային քաղաք Ստորին Եգիպտոսի, Նեղոսի տէլլային արեւմտեան ծայրը, գլխաւոր գետաբերանէն 80 քիլոմ. հեռու : Աշխարհի ամէնէն մեծ անւտրական հրապարակներէն մին եւ Ափրիկէի ամէնէն բազմամարդ քաղաքը, Գահիրէէ ետք, հարաւէն Մարէօղիս լճին եւ հիւսիսէն Միջերկրական ծովուն միջև, 2600 մէդր երկայն եւ 4-500 մ. լայն թերակղզիի մը մէջ ամփոփուած : Այս ցամաքալեզուին մէկ թեւը 2 քիլոմէտրի չափ կը յառաջանայ ծովին վրայ,

կազմելով երկու նաւահանգիստ, մին արեւելեան կողմը, Նոր Գաւահանգիստ անունով, գրէթէ լքուած, եւ միւսը՝ Հին Գաւահանգիստ, արեւմտեան կողմը, վիմուաներով շրջապատուած : Նաւուղիդ մը պէտք է օժպտոյտ անցքերէն անվտանգ նաւելու համար : Քաղաքին բնակիչներուն թիւն է 320,000 : Ճարտարարուեստական հաստատութիւններն են ծաղկանց հիւթերու, բամբակէ ու մետաքսէ հիւսուածոներու եւ կնիւնէ (սազ) ու արմաւենիի ոստերէ փսիաթներու գործարաններ :

Արսաբին վաճառականութիւն. — Եգիպտոսի արտածութեան ու ներածութեան մեծագոյն մասն Աղեքսանդրիոյ ճամբով կը կատարուի : Թրանզիտի վաճառականութիւնը աննշան է : Առեւտրական շարժումը հետեւեալ կերպով բաժնուած է. —

	Ներածում [1000 ֆր.]	Արտածում [1000 ֆր.]
Անգլիա	72,693	192,226
Թուրքիա	32,988	6,209
Ֆրանսա	22,391	26,974
Աւստրիա	15,555	13,704
Պելժիա	8,676	1,201
Ռուսիա	8,497	32,574
Իտալիա	7,282	11,350
Գերմանիա	5,415	18,247

Ամէնէն կարեւոր ներածումներն են հիւսելական ճարտարարուեստի արտադրութիւնք, փայտ եւ ածուխ, մետաղ եւ մետաղական ապրանքներ, ոգելից ըմպելիք, իւղ, արմրտիք, բանջարեղէն, պտուղ, կենդանի եւ կենդանական արտադրութիւնք, քիմիական արտադրութիւնք, անուշահոտութիւնք, գարի, յախճապակի, մորթ եւ մորթեղէն ապրանք, գաղթարերք, եւայլն : Գլխաւոր արտածութիւնք են բամբակ, շաքարեղէգ, բակլայ, սորին, եգիպտացորեն, բրինձ, սոխ : Արտածուած բամբակներուն մեծագոյն մասը, միջին հաշուով 2ու կէս միլիոն խանթար, Անգլիա կ'երթայ : Յետոյ կուգան Ռուսիա (կէս միլիոն խանթար), Ֆրանսա



(350,000), Աւստրիա (225,000), Ամերիկա (215,000), Գերմանիա (185,000), Իտալիա (170,000), եւն :

Առեւտրական ճաւեր . — 1901 ին, Աղեքսանդրիոյ նաւահանգիստն հանդիպած են հետեւեալ նաւերը . —

Դրօշ	Նաւ	Թօնօ
Անգլիական	1210	1,850,715
Ֆրանսական	289	577,139
Աւստրիական	281	498,165
Լիուսական	157	334,881
Թրքական	348	273,154
Իտալական	158	242,205
Գերմանական	60	92,140

Հանդիպած են նաեւ հետեւեալ առազատանաւերը . —

Դրօշ	Առազատանաւ	Թօնօ
Թրքական	1342	176,150
Հելլենական	273	61,348
Իտալական	10	2,625

Շոգեճաւային ընկերութիւնք . — Ծայրագոյն Արեւելքի անգլիական եւ ֆրանսական ընկերութիւններէն զատ, (Բեքինսիլլըր Էնս Օռիեդալ, Օռիեդալ լայն, Մեսաժըրի Մարիթիմ) կան ուրիշ քանի մը ուղղակի գիծեր Աղեքսանդրիոյ եւ Եւրոպայի արեւմտեան նաւահանգիստներուն միջեւ : Գլխաւորներն են Լէյլանտ, Մօս, — մեկնում Լիվրբուլէ ամէն 15 օրը անգամ մը, (երկուշաբթի) : Բարատանի, — մեկնում Լիվրբուլէ ամէն 10 օրը անգամ մը : Վիլսըն, — մեկնում Հրլէ, 14 օրն անգամ մը : Մէսաժըրի, — մեկնում Մարսիլիայէ, ամէն հինգշաբթի իրիկուն եւ ժամանում յԱղեքսանդրիա հետեւեալ երեքշաբթի : Մէսաժըրի շոգեճաւերը անկէ կը շարունակեն իրենց ճամբան մինչեւ Պէրութ եւ Սուրիոյ միւս նաւահանգիստները : Մեկնում Աղեքսանդրիայէ ամէն ուրբաթ եւ յաջորդ չորեքշաբթի ժամանում Մարսիլիա : Աւստրիական Լոյտ — մեկնում Դրիէսդէէ, ամէն չորեքշաբթի, կէս օրին, և կիրակի առաւօտ ժամանում յԱղեքսանդրիա : — Իտալական Ռիւպադիոյի . Ռու-

սական շոգեճաւային ընկերութեան եւ Ստիվիէի շոգեճաւերը կը հանդիպին Աղեքսանդրիա, Պէրութ, Պոլիս, Իզմիր, Պիրէոն :

Երկարուղիք . — Երկու երկաթուղիներ հաղորդակցութեան մէջ կը դնեն Աղեքսանդրիան, մին Գահիրէի հետ (Հարաւարեւելք, 200 քիլոմէր), եւ միւսը Ռօզէդի հետ (հիւսիսարեւելք) : Աղեքսանդրիա հեռագրով կը հաղորդակցի աշխարհի ամէն մասերուն հետ :

Ելմսական հաստատութիւնք . — Մասնաճիւղեր Եգիպտական Պանքայի, որուն կեդրոնը Լոնտոնի մէջ է, Անգլեզիպտական Պանքայի, Օսմանեան Կայսերական Պանքայի, Եգիպտական Բուէտի Ֆօնսիէի, եւ Գրէտի Լիօնէի :

Նաւահանգստի տուրք երեք կարգի կը բաժնուի . — 1. Բուն նաւահանգստի տուրքը, 3 զրշ. առ մէն մի թօնօ, <sup>1</sup>/<sub>6</sub> զրշ. : Ի նպաստ թղթատար շոգեճաւերու : 2. — Գարափի տուրք, օրական 2 զրշ. առ մէն մի թօնօ : 3. — Փարոսի տուրք 5 միլիւմ (0 Ֆր. 1296) 1 էն մինչեւ 800 թօնօ եւ 2 միլիւմ, 800 էն վեր : 4. — Նաւուղիղի տուրք 1 Եգիպտական ոսկի եւ 1,600 միլիւմ 26 ոտքէ աւելի ծովուն մէջ չիջնող շոգեճաւերու համար, իսկ 26 ոտքէ աւելիի համար 800 միլիւմի յաւելուածական տուրք (20 Ֆր. 738) : Թէ՛ մուտքի թէ՛ ելքի ատեն : Այս տուրքերը պարտաւորիչ են ամէն նաւերու համար, նաւուղիղ գործածեն թէ՛ ո՛չ, բաց ի մարտանաւերէ եւ 10 թօնոյէն վար նաւերէ : 5. — Նաւաձուլութեան տուրք, որ փոփոխական է : 6. — Առողջապահական տուրք 751 թօնոյէ աւելի շոգեճաւերու համար : Մասնաւոր տուրքեր ալ կան քարանդինա սպասող շոգեճաւերու համար : Ապրանքները նաւ դնելու ծախքերը միջին հաշուով 1,50 — 2 Ֆր. ի կը բարձրանան առ մէն մի թօնօ : Պարպելու ծախքերն ալ նոյն են :

Մքերանց . — Ներածուած ապրանքները կը պահուին մաքսային մթերանոցներուն մէջ : 8 օր վարձք չառնուիր, իսկ անկէ անդին, առնուած տուրքը փոփոխական է ապրանքներու տեսակին և մթերանոցին մէջ կեցած օրերուն



Համեմատ : Աղեքսանդրիոյ մթերանոցներու ընկերութիւնն ալ (Bonded Warehouse Company) մասնաւոր մթերանոցներ ունի եւ սակացոյցը 7 կարգի բաժնուած է :

Մասնաւորք . — Երաժշտական արժէքին վրայ կ'առնուի 8 0/0 մաքսատուրք, որու վրայ կ'աւելնան 1 — 1/2 0/0 իրր քարափի և թաղապետական տուրք և 2 . — փոխադրութեան տուրք սնտուկներու կամ հակերու ծանրութեան համեմատ : Արտածուած ապրանքներուն արժէքին վրայ կ'առնուի 1 0/0, որու վրայ կ'աւելնան 2 0/0 քարափի և 1 0/0 թաղապետութեան համար :

Պայմաններ ու սովորութիւններ . — Առեւտրական թուղթերն ընդհանրապէս վճարելի են սթէրլինգով կամ ֆրանքով և Բարիդի կամ Լոնտոնի վրայ չէքով : Գանձումը կը կատարուի հաստատ փոխանակագնի վրայ, այսինքն 385 3/4 եգիպտ. զրշ . 100 ֆրանքի համար եւ 97 1/2 զրշ . սթէրլինի համար : Արտածման մեծագոյն մասն անգլիական հրապարակներու կողմէ կատարուելուն, սթէրլինի փոխանակագին իրր հիմ կը ծառայէ Ֆրանսայի վրայ փոխանակագրերու գործողութեանց : — Միջնորդչէքը սովորաբար 1 0/0 է : Աղեքսանդրիոյ Սակարանն ամէն օր բաց է, բայց փոխանակագրի գործառնութիւնք տեղի կ'ունենան գլխաւորապէս երկուշարթի, կէս օրէն մինչեւ իրիկուան 7—8 : Եթէ առեւտրական թուղթ մը պայմանաժամին չհատուցուի, բրօքսիտը պէտք է ըլլայ հետեւեալ օրը, մինչեւ կէս օր : Ծախքն է 58 զրշ :

Իրամ . — Եգիպտոսի դրամական միութիւնն է զրուշը : Ոսկի դրամներն են եգիպտական ոսկի = 100 զրշ . = 25.92 ֆր . եւ 1/2 ոսկի = 50 զրշ : Արծաթ դրամներն են դալառի = 20 զրշ . = 5.18 ֆր ., 1/2 դալառի = 10 զրշ ., 1/4 դալառի = 5 զրշ . եւ 2 ու 1 զրշ . նոց : Պղինձ դրամներն են միլիէմ — զրուշին 1/10ը, եւ 1/2 ու 1/4 միլիէմ : Անգլիական և ֆրանսական ոսկիներն անցած են եգիպտական ոսկիներուն տեղ, որք շրջաբերութենէ կը քաշուին եւ սթէրլինի կը վերածուին : Ֆրանսական ոսկին կ'արժէ 77 զրշ . 1 միլիէմ եւ 1 սթէրլինը՝ 97 զրշ . 5 միլիէմ : Օսմանեան ոսկին = 87 զրշ .

# Պ Ա Ն Ք Ա

Դ . — ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՊԱՆՔԱ

2 . — Զեղչը դրամագլուխներու լուազոյն գործածութեան մէկ եղանակը եւ վարկի ամենախառնարեալ մէկ ձեւն է : Կանխաւճար մ'է որ կը տրուի առեւտրական թուղթի մը արժէքին վրայ, պայմանաւ որ դրամն առնողը պանքէոին փոխանցէ իր թուղթը, Առեւտրական թուղթ կը կոչուին փոխանակագրերը, հրամանի մուրհակները, չէքերն եւ պահեստի դրուած ապրանքներու ընկալագրերը (warrants ou récépissés) : Համառօտ կերպով նշանակենք այն ծառայութիւնները զոր զեղչը կը մատուցանէ ընդհանուր վաճառականութեան : Առեւտրական հրապարակի վրայ հազուադիւր է որ գործառնութիւնք կանխիկ ըլլան : Ընդհանրապէս վճարումը տեղի կ'ունենայ ապրանքներուն յանձնումէն քանի մը օր, քանի մը շաբաթ եւ երբեմն քանի մը ամիս ետք : Ծախողն ուրեմն ստիպուած պիտի ըլլար աւելի կամ նուազ երկար ժամանակ սպասել ծախած ապրանքին փոխարժէքը գանձելու համար : Արդ, իր շահը կը պահանջէ տրամադրելի դրամ ունենալ առեւտրական ուրիշ գործերը ներու համար, Պանքէոը, մասնաւոր վարձքի մը փոխարէն, վաճառականին տրամադրութեան տակ կը դնէ առեւտրական թուղթին փոխարժէքը : Այսպէս, թէ՛ պանքէոը թէ՛ վաճառականը շարժման մէջ կը դնեն իրենց դրամագլուխները : Բաց աստի, պանքէոն աւելի դիւրութեամբ կը գործածէ իր զեղչած առեւտրական թուղթը : Կրնայ, եթէ պատրաստ դրամի պէտք ունենայ, կրկին զեղչել զայն (rées-compter) : Մեր հրատարակած Բառարանին մէջ առեւտրական թուղթերու վրայ ընդարձակօրէն խօսելու մտադիր ըլլալով, հստ մանրամասնութեամբ չենք մտներ, միայն ըսենք



թէ առեւտրական թուղթը ապրանքներու վրայ կատարուող առեւտրական գործողութեան մը, — այսինքն իրական գործառնութեան մը — արդիւնքն է; որ կ'երաշխարհորուի քաշողին, ստորագրողին եւ փոխանցողներուն կողմէ: Եթէ այդ թուղթին պայմանաժամը քիչ օրուան ըլլայ « կարճ պայմանաժամը քանի մը շաբաթն անցնի, « Երկար պայմանաժամով թուղթ » (papier long) կ'ըսուի: Զեղչին եւ պայմանաժամին միջեւ անցնող աւելի կամ նուազ երկար ժամանակը պանքէ-ռին վրայ պարտաւորութիւն կը դնէ ուրեմն տրամադրելի դրամագլուխը միայն գործածել: Վտանգաւոր է ի տես վը-հարելի դրամագլուխներ գործածել երկար պայմանաժամ ու-նեցող թուղթերը զեղչելու: Ընդհակառակը, 5-8 օրուան պայմանաժամ ունեցող թուղթերը զեղչելով, պանքէռը կրնայ տրամադրելի գումարներու վրայ յոյս դնել կարճ պայմանա-ժամի մէջ: Իրաւ, կրկին զեղչումն ալ (re'escompte) միջոց մ'է դրամ հայթայթելու, բայց պէտք չէ մտնալ թէ երբ անոր հարկ տեսնուի, նոյն իսկ նուազ կարեւոր տաքնապի մը ատեն, վստասբեր կ'ըլլայ պանքէռին համար, որովհետեւ անշուշտ զեղչի սակը կը բարձրանայ նոյն միջոցին: Զեղչն ուրիշ առաւելութիւններ ալ ունի: Առեւտրական թուղթը, պանքէռին ձեռքն անցնելուն պէս, տեսակ մը դրամ կըլլայ զոր ըստ պարագային կը գործածէ ուրիշ պանքէռներու հետ իր գործառնութիւններուն մէջ: Պանքայի մը համար կո-րուստ է իր դրամագլուխին անշարժ մնալը: Անոր շարժու-մէն միայն պիտի շահի: Ուրեմն, առեւտրական թուղթին շրջաբերութիւնը, ու է անձի մը հայթայթած վարկէն զատ ընդհանուր օգուտներ ալ առաջ կը բերէ: Ծշտենք պան-քէռին միջամտութեան սահմանը: Առեւտրական թուղթ մը զեղչելու համար պանքէռը պէտք է ինքն ալ ուրիշ տե-ղէ դրամ գտնէ իր զեղչի սակէն վար գնով մը: Պանքէռը անպատճառ դրամատէր (capitaliste) մը չէ, որպէսզի մի մի-այն իր յատուկ դրամագլուխը գործածէ: Շատ անգամ ինքն ալ, անձնական դրամագլխէն զատ, զոր կրնայ ունենալ, փոխառու մ'է: Իբր միջնորդ կը ծառայէ առանց գործածու-թեան մնացած դրամագլուխներու եւ վարկ փնտռող վաճա-

ռականներու միջեւ: Ուրեմն, շահ չունի տոկոսի սակին բարձ-րացումէն: Պէտք է փափաքի մանաւանդ որ այդ սակը բը-նական վիճակ մ'ունենայ, որպէս զի գործերու շարժման նը-պաստէ եւ իր տան գործառնութեանց թիւը բազմապատկէ: Ատեն մը, ուր առեւտրական գործառնութիւնք այնչափ ընդարձակուած չէին, զեղչի համար բազմաթիւ եւ անօ-գուտ ձեւակերպութիւններ կային: Երբ անցեալ դարու մէ-ջերը, Ֆրանսայի գանազան քաղաքներուն մէջ Պանք տը Ֆը-րանսի հաստատած առաջին մասնաճիւղերուն անյաջողու-թեան պատճառներն ուսումնասիրուի, որոշապէս պիտի հաս-կցուի թէ ո՞րքան դանդաղ եղած է վարկի զարգացումը: Անկէ ի վեր գործերը բոլորովին փոխուած են: Այսօր պան-քէռն իւր կիսիկին ետեւ չսպասեր որ զեղչելու համար թուղթ բերեն իրեն: Ինք յատուկ գործակալներ կը զրկէ ասդին անդին եւ շահաւոր հրապարակ մը կը ներկայացնէ մեծ պանքաներու մէջ մթերուած հսկայ գումարներու շահագոր-ծութեան համար: Անգլիոյ մէջ զեղչի գործողութիւնը, ինչպէս ըսինք, մասնագիտութիւն է: Հոն զեղչը տարբեր գործառ-նութիւններու վրայ կը կատարուի: Պիլ-Տիլլըսները, որք ընդհանրապէս խիստ հարուստ են, կը գործեն Զէն 6 ամիս պայմանաժամ ունեցող թուղթերու վրայ, զորս կը գնեն օտար պանքաներէ եւ կը պահեն, պայմանաժամին սպասե-լով: Ընդհանրապէս նորէն չեն զեղչեր, այլ ձօյնդ սոփս պանքէ մը դրամ փոխ կ'առնեն աւանդ ձգելով իրենց թուղ-թը զոր պարտին հատուցանել փոխատու պանքային առա-ջին պահանջման վրայ: Ամէն երկիրներու մէջ, կեդրոնի մեծ վաճառականներու կողմէ քաղաքներու եւ գիւղերու փոք-րաքանակ վաճառականներուն ծախուած ապրանքներն ընդ-հանրապէս ապառիկ կը տրուին եւ փոխարէն առեւտրական թուղթեր կ'առնուին: Անգլիոյ մէջ, ընդհակառակը, այս վը-հարուստներ կանխիկ կ'ըլլան կամ թէ մեծ վաճառականք ի-րենց ուղեւոր պաշտօնեաներուն միջոցաւ կը գանձեն ապ-րանքին յանձնուած ամսուն մէջ: Հետեւաբար, այս կարգի թուղթեր կը պահսին Անգլիոյ մէջ, քանի որ տեղական սո-վորութիւններու հետեւելով, անգլիացի փոքրաքանակ վա-ճառականը չուզեր բազդատարար կարճ պայմանաժամով ապրանք առնել:



# Հ Ի Ի Ս Կ Է Ն Կ Ե Ր Պ Ա Ս Ն Ե Ր Ը

Ե Ի

ՉԱՆՈՒՔ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՆԵՐԸ (Métier)

(Տեխնիկ. Տեսքի պատկերք)



Այսօր, մարդկային մարմինը պատելու, պահպանելու և պերճաշուք պահուստներով հագուստները համար գործածուած ամէն կարգի կերպասեղէնները երկու որոշ եղանակներով կը պատրաստուին: Մէկը ճիւսկեց (tricot) կը կոչուի և միւսը անկուած. (tissage):

Սակայն, բաւական չէ այս երկու ահագին ճարտարութեստները քանի մը բառով որակել, այլ պէտք է յետադարձ ակնարկ մը ձգել անոնց նախկին վիճակին վրայ: Արդ, երբ նախամարդիկ ծառի կեղեւով ու կենդանիներու մորթերով իրենց մարմինը պատսպարելու սովորութիւնը բարեփոխել ջանացին, առաջին կերպասանութը եղաւ հիւսկէնը: Կախիլի վրայ ձեռքով մանուած թելերը գուրպիճաղով (շիշ) կը հիւսէին և հազներէ կը պատրաստէին: Յետոյ, մարդոց բնատուր հանճարէն ծնունդ առաւ կահով թել մանելու եւ անկուածով կերպաս պատրաստելու դրութիւնը: Այս եղանակով, տարագործութեան արտադրութիւնն հարիւրապատիկ բազմապատկուեցաւ: Ա՛լ հետզհետէ սկսաւ ծնունդ առնել ոստայնանկութեան արհեստը, որ արագարար ծաղկեցաւ ամբողջ Արեւելքի ժողովուրդներուն մէջ, ինչպէս մինչեւ այսօր անուանի են հնդկական դիսակներն ու շինական երփներանգ սնդուսները:

Ոստայնանկութիւնը՝ հազարաւոր տարիներ՝ մարդոց առօրեայ գործածութեան յոյժ կարեւոր մէկ պիտոյքը հայթայթած է, ազնուագոյնէն մինչեւ ստորնագոյն տեսակները, միշտ փայտէ կազմածներով շինուած կահերու միջոցաւ, ինչպէս մինչեւ այսօր ալ սոյն կազմածները նոյնութեամբ կը շինուին ու կը գործածուին թէ՛ քաղաքներու մէջ թէ՛ գիւ-

ղակի յետին խրճիթը: Ոստայնանկութիւնը տարագործութեան անուան տակ մտաւ Ժ.Լ. դարուն: Երկաթը տեղի տուաւ փայտին և մեքենական շարժումներն եկան կատարելագործեցին նախնի դրութիւնը: Մէկ կողմէ մեծամեծ մանարաններու հաստատմամբ և միւս կողմէ տարագործութեան յատուկ հսկայ գործարաններու կառուցմամբ, մարդկային ձեռքերուն ու ոտքերուն շարժումներն ու գործողութիւններն ա՛լ սկսան մեքենականութեամբ կատարուիլ: Մարդը, պարզ հսկող մը ըլլալով, արտադրութեան քանակն ու տեսակներու պէսպիսութիւնն հազարապատիկ բազմապատկեց: Ոստայնանկութեան աշխարհին քաջածանօթ ֆրանսացի չափագէտ-մեքենագէտ մը, հանճարեղն ժագառ, միջոցը գտաւ նախնի դամասկեան դրութիւնը մեքենականութեամբ կատարելու, այն է առէջքի (chine) թելերն ըստ կամս շարժելու, որով կը յօրինուին ամէն տեսակ նկարէն անկուածներ: Անկուածոց կահերուն վերայ կցորդուած սոյն յաւելուածական մասնակի գործիքը ցարդ հնարիչին անունով ժագառ կը կոչուի:

Այսպէս, ոստայնանկութիւնը հետզհետէ կը զարգանար, մինչդեռ հիւսկէնը կ'ընկրկէր, այսինքն շահագործելի ըլլալէ կը դադրէր: Կարծես թէ այս վերջինը լոկ գուլպայ կամ առ առաւելն կանացի պլըանքի վերաբերեալ մէկ քանի ուսադարդեր շինելու դատապարտուած ըլլար: Ոստայնանկութեան մէջ, կ'կոցին մէկ անցքը առէջքի հարիւրաւոր և հազարաւոր թելերը մէջ ընդ մէջ խաչածեւելով նոյնչափ անկուածի թելեր կը կազմէ, մինչ նոյնքան ժամանակի մէջ մարդ գուրպիճաղով հաղիւ 3 կտիմ կամ օղակ (maille) կրնայ ընել: Հիւսկէնին այս անբաղդատելի դանդաղութիւնը տեւեց մինչեւ Ժ.Ե. դարուն վերջերը, քանի որ մարդուն մատները մէկ շարժումով մէկէ աւելի կտիմներ կարող չէին կազմելու: Բայց վերջապէս մարդկային հանճարը գիւտ մը կը ծնի: Անգլիոյ մէջ Սալֆէքթիսկ մը կուգայ և կը յղանայ սա գաղափարը թէ փոխանակ գուրպիճաղին վրայ տասնեակ կտիմներ ըլլալու և մի առ մի շրջան բոլորելու, ամէն մէկ կտիմ զատ զատ գուրպիճաղ ունենայ և միեւնոյն գուրպի-



ճաղը պատրաստէ հիւսկէնին երկայնութիւնը կազմող իւրաքանչիւր տողաշարին կտիմները: Ահա այս պարզ սկզբունքով կը հնարուի հիւսկէնի առաջին մեքենան, շուրջ երկու դար առաջ: Ա՛լ մէկ շարժումով 100է աւելի կտիմներ մէկանց կը շինուին: Այս մեքենան առաջին օրէն ինչ պարզութիւն որ ունէր, մինչեւ այսօր ալ գրէթէ պահած է նոյն պարզ սկզբունքները: Քանի մը բառով կրնանք ըսել թէ այս մեքենային գլխաւոր կազմածը կը բաղկանայ երկու հարթ մակերեսով տախտակներէ, որք իրարու ներհակ հաստատուած են և որոնց արտաքին մակերեսին վրայ պեղուած են համաչափ հեռաւորութեամբ ակօսներ: Ասոնց մէջ վեր ու վար կը շարժին գուրպիճազերը, մանուածանկիւն արտակեղրոններու միջոցաւ, զորս ալ ու ձախ կը վարէ մեքենային շարժումն առաջ բերող մանիչը:

(Շար.)

Մ. ԳԱԼԷՆՏԷՐ

## ԹՈՒՐՔԻՈՅ ԳՈՐԳԵՐԸ

### 3. — ՈՒՇԱԳԻ ԵՒ ԿԵՕՐՏԷՍԻ ՄԷՋ

\* \* \* Ուշաքի մէջ 2000 գործասեղան կայ, որոց 600ը միշտ կը գործեն ամբողջ տարին: Գորգաշինութեան կ'ըբազին 4000 գործաւորներ, որոց 3000ը կին, 500ը աղջիկ և 500ը այր: Գործաւորներն օրականով կ'աշխատին և 2 էն 6 զրջ. կ'առնեն: Իւրաքանչիւր կին օրը միջին հաշուով 20-25 սնդմ, երկայնութեամբ և 68 սնդմ. լայնութեամբ գորգ կը հիւսէ: 4 մէդր լայնութեամբ գորգ մը շինելու համար սովորարար 6 կիներ կը գործածուին: Գորգաշինութեան դրութիւնը նախնական վիճակի մէջ է: Գործասեղաններուն երկայնութիւնը մէկէն մինչեւ 10 մէդր կ'ըլլայ, գորգերուն ծաւալին համեմատ: Մէն մի գործասեղանի առջեւ մինչեւ 15 գործաւորուհի կրնան աշխատիլ: Արտասահմանի համար հաղորդակցութիւնք կը կատարուին Իզմիրի վաճառականներու միջոցաւ, որք յանձնակատարներ ունին Ուշաքի մէջ և 3 0/0 յանձնարարողչէք ուտան անոնց: Մէն մի յանձնակատար շատ մը գործասեղաններ կը վարձէ և կանխավճարներ կ'ընէ անոնց տէրերուն: Այս վերջինք աշխատութեան առանցքն են: Բուրդը կը գնեն, կը պատրաստեն, գործաւորուհիներ կը վարձեն, անոնց վրայ կը հսկեն: Վերջապէս բոլոր պատասխանատուութիւնն իրենց վրայ է: Ամէն յանձնակատար ներկատուն մ'ունի, ուր իր հաշուոյն աշխատող բոլոր գործատէրեր պարտաւոր են ներկել տալ իրենց բուրդերը: Այս դրութիւն հասոյթի հաստատ ազրիւր մ'է յանձնակատարներուն համար: Ուշաքի գորգերը, շինութեան տեսակէտով, երեք կարգի կը բաժնուին. 1. Թեք իլմե, 2. Զիֆթե իլմե և 3. Պարհանա: Թէք իլմէ կ'ըսուին այն գորգերը որոց թեղանը մէկ թելէ կը բաղկանայ: Այս գորգերը շատ նուրբ աշխատութիւն կը պահանջեն և հետեւապէս սուղ են: Մէկ քառակուսի էնտագէն (երկու քառակուսի էնտագէն մէկ քառակուսի մէդրէն քիչ մ'աւելի է) 50-55 զրջ.ի կը ծախուի, Օսմ. ոսկին 121 1/2 զրջ.էն: Զիֆթե իլմեի թեղանը կրկին թելէ կը բաղկանայ և քառակուսի ենտագէն գինն է 37-45 զրջ: Ամէնէն աւելի այս տեսակը կ'արտածուի: Պարհանաները սովորական գորգեր են, որոց քառակուսի ենտագէն 20-35 զրջ. է: Ուշաքի գորգերը նկարի տեսակէտով երկու կարգի կը բաժնուին. — 1. Էլվան, որուն նկարը շատ գոյներէ կը բաղկանայ, և 2. Շափրաւ, որուն նկարը միայն երկու գոյն ունի, գլխաւորապէս կապոյտ և կարմիր: Արտածման հարիւրին 60ն Անգլիա 20ը Ֆրանսա և 20ն Ամերիկա կ'երթայ: Սակայն Ամերիկա՝ ուղղակի գնումներէ զատ՝ Անգլիայէ ու Ֆրանսայէ ալ կը գնէ: Ուշաք տարին 600,000 քիլոկրամ խամ բուրդ կ'սպա-

րարար 6 կիներ կը գործածուին: Գորգաշինութեան դրութիւնը նախնական վիճակի մէջ է: Գործասեղաններուն երկայնութիւնը մէկէն մինչեւ 10 մէդր կ'ըլլայ, գորգերուն ծաւալին համեմատ: Մէն մի գործասեղանի առջեւ մինչեւ 15 գործաւորուհի կրնան աշխատիլ: Արտասահմանի համար հաղորդակցութիւնք կը կատարուին Իզմիրի վաճառականներու միջոցաւ, որք յանձնակատարներ ունին Ուշաքի մէջ և 3 0/0 յանձնարարողչէք ուտան անոնց: Մէն մի յանձնակատար շատ մը գործասեղաններ կը վարձէ և կանխավճարներ կ'ընէ անոնց տէրերուն: Այս վերջինք աշխատութեան առանցքն են: Բուրդը կը գնեն, կը պատրաստեն, գործաւորուհիներ կը վարձեն, անոնց վրայ կը հսկեն: Վերջապէս բոլոր պատասխանատուութիւնն իրենց վրայ է: Ամէն յանձնակատար ներկատուն մ'ունի, ուր իր հաշուոյն աշխատող բոլոր գործատէրեր պարտաւոր են ներկել տալ իրենց բուրդերը: Այս դրութիւն հասոյթի հաստատ ազրիւր մ'է յանձնակատարներուն համար: Ուշաքի գորգերը, շինութեան տեսակէտով, երեք կարգի կը բաժնուին. 1. Թեք իլմե, 2. Զիֆթե իլմե և 3. Պարհանա: Թէք իլմէ կ'ըսուին այն գորգերը որոց թեղանը մէկ թելէ կը բաղկանայ: Այս գորգերը շատ նուրբ աշխատութիւն կը պահանջեն և հետեւապէս սուղ են: Մէկ քառակուսի էնտագէն (երկու քառակուսի էնտագէն մէկ քառակուսի մէդրէն քիչ մ'աւելի է) 50-55 զրջ.ի կը ծախուի, Օսմ. ոսկին 121 1/2 զրջ.էն: Զիֆթե իլմեի թեղանը կրկին թելէ կը բաղկանայ և քառակուսի ենտագէն գինն է 37-45 զրջ: Ամէնէն աւելի այս տեսակը կ'արտածուի: Պարհանաները սովորական գորգեր են, որոց քառակուսի ենտագէն 20-35 զրջ. է: Ուշաքի գորգերը նկարի տեսակէտով երկու կարգի կը բաժնուին. — 1. Էլվան, որուն նկարը շատ գոյներէ կը բաղկանայ, և 2. Շափրաւ, որուն նկարը միայն երկու գոյն ունի, գլխաւորապէս կապոյտ և կարմիր: Արտածման հարիւրին 60ն Անգլիա 20ը Ֆրանսա և 20ն Ամերիկա կ'երթայ: Սակայն Ամերիկա՝ ուղղակի գնումներէ զատ՝ Անգլիայէ ու Ֆրանսայէ ալ կը գնէ: Ուշաք տարին 600,000 քիլոկրամ խամ բուրդ կ'սպա-



ոէ: Տարեկան արտադրութիւնը ճշտու յայտնի չէ. վեր ի վերոյ 200,000 քառակուսի հեկտարէ է, որուն 4000ը միայն թուրքիա եւ Եգիպտոս կ'երթայ, իսկ մնացեալն արտասահման: Ուշաք՝ իր այս ճարտարարուեստին շնորհիւ՝ տարեկան մօտ 100,000 ոսկի կը քաշէ: Գորգերուն նկարներն արարութիւնք 150 0/0 աւելցած են եւ Ուշաքցիք չեն կրնար ժամանակին յանձնել խնդրանքները, գործասեղաններուն համեմատական անբաւականութեան պատճառաւ:

\* \* Կէօրտէսի գորգերը գոյներու եւ նկարներու կողմէ պարսկական գորգերուն կը նմանին: Կէօրտէս ունի 4000 գործասեղան եւ 2000 գործաւորուհի, որք տարին 10,000 քառակուսի մէդր գորգ կը հիւսեն: Քուլայի մէջ կը շինւին պղտիկ գորգեր, լաւ տեսակ, տեղային նախնական ոճով, եւ ընդհանրապէս ամուսնական օժտի կը գործաււին: Այս գորգերուն շինութիւնը շատ սահմանափակ է, որովհետեւ գինները բարձր են:

4 . — ԻՉՄԻՏԻ ՄԷՉ

Իզմիտցիք կը հիւսեն զուտ կամ բամբակախառն վուշով պղտիկ գորգեր, որոնց երկայնութիւնը 4 եւ լայնութիւնը 2 մէդրը չանցնիր: Ընդհանրապէս բուսական գոյներ կը գործածեն: Բաց գոյները նախապատիւ են միշտ: Իզմիտի գորգերը բաւական դիմացկուն են եւ մեծ մասամբ կը ծառայեն տեղացիներուն սրահները զարդարելու: Գիններն են 20-120 զրուշ, ըստ տեսակի: Քեջէ ըսուած տեսակ մը գորգ ալ կը շինուի ճնշուած բուրդով, բայց ասոր շինութիւնն օրէ օր կը պակսի: Քսան տարի առաջ, այս գորգեր շատ կը գործաււէին բոլոր տուններուն մէջ, բայց այսօր անոնց յաջորդած են վերոյիշեալ գորգերը, ինչպէս նաեւ Եւրոպական նեղ գորգերը: Տասը տարի առաջ, Ուշաքցի մը եկաւ հաստատուեցաւ Հէրէքէի մէջ եւ հոն սկսաւ գեղեցիկ գորգեր շինել, կառավարութիւնն հաւնեցաւ եւ Հէրէքէի մէջ յատուկ գործարան մը հաստատեց, այն տեղ պաշտօնի կոչելով այդ վարպետը:



Գ Ի Ն

12 Տետրի՝ դրու՛ 12 ԿԱՆՆԵԻԿ

Գաւառաց համար՝ իբր բոսի ծախք՝ 3 դրու՛ արեղի

Հասցէ

**ՍԻՄՕՆ ՉԻՕՄԼԻԲՃԵԱՆ**

Ի հմբագրասուն «Բիւզանդիոն» Հայաբերքի  
Պապը Ալի հասսկսի թիւ 23—25 4. Պոլիս

---

**ԱՆՀՐԱԺԵՇՏ**

Ամեն վանառականի, գրագրի, ուսանողի եւ այլն.

---

معارف نظارت جلیله سنک ۳۰۳ نومرولی و فی ۱۶ تشرین اول  
سنه ۱۲۱۶ تاریخلو رخصتنامه سیله طبع اولمشدر



«Ազգային գրադարան»



NL0083828



